ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ ՈՒՂՂՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի հաճախորդ, տեղեկացիր քո իրավունքների և պարտականությունների մասին

«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն <u>գանձապետարան ուղղվող</u>

հարկերը

տուրքերը

պարտադիր վճարները

<u>ՊԱՏՇԱՃ</u> կատարելու համար հարկավոր է ներկայացնել նաև.

- ***Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),*** **եթե Դուք ներկայացնում եք իրավաբանական անձի:**
- ***Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ),*** **եթե Դուք ֆիզիկական անձ եք: Բացակայության դեպքում ՀԾՀ չստանալու մասին տեղեկանք:**

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ <u>ՀԾՀ ՈՒՆԵՆԱԼԸ ԿԱՐԵՎՈՐ</u> Է, ՔԱՆԻ ՈՐ ԱՅՆ ԵԶԱԿԻ Է ԵՎ ՉԻ ԿԱՐՈՂ ՓՈՓՈԽՎԵԼ:

ՉԳՈՒՇԱՑԻ՛Ր

<u>ՀՎՀՀ ԿԱՄ ՀԾՀ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ՉԵՆ ՈՒՂՂՎԻ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ ԵՎ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՑՆԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:</u>

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հաճախորդներ,

Եթե ԴԵՌ չունեք հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), հարկավոր է

- **Դիմել Ձեր տարածքային (այնտեղ, որտեղ հաշվառված եք) անձնագրային ծառայությունների բաժանմունք**

Եթե Դուք հաշվառված եք մարզերում, սակայն ցանկանում եք ՀԾՀ-ն ձեռք բերել Երևանում, ապա կարող եք դիմել Անձնագրային և վիզաների վարչություն (Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք):

- **Ներկայացնել Ձեր անձնագիրը և անձնագրի պատճենը**

ՀԾՀ ձեռք բերելը արագ է և անվճար:

Անձնագրային և վիզաների վարչության
ԹԵԺ ԳԻԾ՝ 010 37-02-64